



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճեններ և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format

Adapt – remix, transform, and build upon the material

ԲԱՏՐԱԿԱՅԻՆ  
ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ  
ՈՒՂԴԻՆԵՐԻ  
ՎՐԱ



ՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐՍԻՉՈՒԹՅՈՒՆ

ԵԵՐԵՎԱՆ - 1929



Բ. Ի. Զ Ա Կ Ո Վ

321.914.2

۲

# ԲԱՏՐԱԿՎԻՆ ԴՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ

A  
4138



ՊԱՏՐԻԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ, - 1929

ՊԵՏՏՐԱՏԻ II ՏՊԱՐԱՆ

ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Հրատ. № 903 Պ. № 1661

Տիրաժ 4,000

Գրառեպիզար № 1595 (բ.)

Ի. ԻՆՉՈՒ ԲԱՏՐԱԿՆԵՐՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԵՆ ԱՎԵԼԻ ՎԱՏ,  
ՔԱՆ ԿԱԼՎԱԾԱՏԵՐԵՐԸ

Բատրակների դասակարգային միությունն  
ավելի դժվար գործ է, քան արդյունաբերական  
բանվորների կազմակերպությունը։ Մեքենան  
միացրել ե գործարանների, զավողների բանվոր-  
ներին հսկայական ձեռնարկություններում մի  
հարկի տակ և դրանով ել թեթևացրել նրանց  
կազմակերպվելու գործը։ Դյուղատնտեսական  
և անտառալին բանվորները կազմակերպվելու,  
միանալու համար շատ մեծ դժվարություններ  
ունեն, վորովհետև նրանք աշխատում են դաշտե-  
րում և անոառներում՝ արտադրության հետա-  
մաց պայմաններում, ցրված կերպով կամ շատ  
փոքր խմբերով։

Զնալած այս դժվարություններին, Խորհրդագին  
Միության մեջ բատրակների, անտառային բան-  
վորների, փայտ կտրողների, հոտաղների ճնշող  
մեծամասնությունը գիտի ԽՍՀՄ գյուղատնտե-  
սական և անտառային բանվորների արհեստակցա-  
կան իր միության մասին, և գյուղատնտեսական

ու անտառային տնտեսության մեծ քանակությամբ բանվորներ արդեն միացած են արհմիության շարքերում։ ԽՍՀՄ մեջ  $3\frac{1}{2}$  միլիոնից ավելի գյուղատնտեսական և անտառային բանվորներ կան։ Արդի գյուղանուառ միության մեջ առ մեկն հոկտեմբերի 1926 թվի կազմակերպված եյին մեկ միլիոն 100,000 անդամ, չամարյա գյուղանուառ բանվորների յերեքից մեկը անդամ ե արհմիության։ Արհմիությունը հետզհետե ավելի մեծ չափով իր պաշտպանության տակ ե առնում բատրակային մասսաները արագես, 1926 թ. միության մասնակցությամբ կապվել են բատրակների և գործատերերի միջև մեկ միլիոնից ավելի աշխատանքի պայմանագրեր։ Ամեն ամիս մեր արհմիության շարքերը շարունակում են աճել և ամրանալ։

Բայց արտասահմանում վոչ մի տեղ չկա գյուղատնտեսական և անտառային բանվորների ենապիսի ուժեղ և մեծ արհմիություն, ինչպես մեզ մոտ եստեղ դեռ աչքի առաջ ել պիտի ունենալ այն, վոր մի շարք յերկրներում գյուղ տնտեսական և անտառային բանվորների թիվն ավելի շատ ե, քան ԽՍՀՄ մեջ։

Ավելի շատ գյուղատնտեսական և անտառային բանվորներ (Խ. Շ. Ռիրդային Միությունից հետո) միացած են Արևմտյան Յեւլրոպայի միքանի ենապիսի յերկրներում, ուր բանվորական շարժումը վաղուց գոյություն ունի, եղապիսի յերկրներից են՝

Ավստրիան, Զեխո-Մլովակիան, Շվեդիան, Անգլիան, Գերմանիան, Դանի.ն. Բայց չնայած սրան, ելի ես յերկաների գյուղատնտեսական և անտառալին բանվորների ամեն մի հարյուր մարդուց միայն յերկու հոգինեն գտնվում դասակարգային միության մեջ:

Բատրակներն ես յերկրներից ավելի թույլ են կազմակերպված աշխարհի ուրիշ մաս ըում՝ Ամերիկայում, Աֆրիկայում, Ասիայում և Ավստրալիայում. Մի իոնավոր, տամայակ միլիոններով սպիտակ, սև, դեղին ցեղերի բանվորներ առավոտված եղից մինչև իրիկվա մութը Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների բամբակի, Զինաստանի բրնձի, Հնդկաստանի թոյի և սուրճի, Կենտրոնական Աֆրիկայի շաքարեղեգնի, կառուչուկի, ծխախոտի դաշտերում, Արգենտինայի և Բրազիլիայի արոտատեղերում արածացնում ևն հսկայական քանակությամբ անասուն, կանադայի հսկայական անտառներում փայտ կտրում աշխատանքի ծանր պայմաններում, կիզիչ արևի տակ, անտառների դրության մեջ:

Համախարհային կապիտալն իր հարստությունը և կարողությունը կառուցում, սաւանում ե այդ բանվորների աշխատանքից, իսկ այդ բանվորներից միայն սակավաթիվ հարյուրներն են կազմակերպված արհմիությունների մեջ:

Արտասահմանի, 21 յերկրներում կա գյուղատնտեսական և անտառային բանվորների միայն 30 դասակարգային արհմիություն, վորոնք միացնում են կես միլիոնից միքիչ ավելի բանվորներ (533,966 անդամ):

Միքիչ ավելի բանակության գյուղատնտեսական և անտառային բանվորներ են կազմակերպված արտասահմանում վոչ պրոլետարական կազմակերպություններում (700,000-ից ավելի). դրանք ենպիսի միություններ են, ուր բանվորներին հավասար իրավունքներով անդամ են և կալվածատերերը, նրանց կալվածքների կառավարիչները, կույակները: Եղափիսի վոչ դասակարգային կազմակերպությունները, վորոնց գույն կանգնած են լինում սովորաբար տերտերները, իհարկե, կալվածատերերի ձեռքին մի գործիք են: Դասակարգային միությունների համեմատությամբ եղ միությունների շատ ավելի անդամ ունենալը բացատրվում է նրանով, վոր այստեղ կալվածատերերն ուղղակի ստիպում են բանվորներին մտնել իրենց հնազանդ և յենթականոգնորականների – տերտերների և ուրիշ վոչ պրոետարական կազմակերպությունները:

Գյուղատնտեսության և անտառային տնտեսության տերերն արտասահմանում շատ լավ կազմակերպված են: Կալվածատերերը, կույակ-

ները, անտառային արդյունաբերության տերերը  
 22 լեռկրներում միացած են ձեռնարկատերերի  
 66 միություններում։ Ձեռնարկատերերի միու-  
 թյունների մի մասը գաղտնիք ե պահում իր գու-  
 ծունելության տեղեկությունները, բայց հայտնի  
 յե, վոր ալդպիսի միությունների անդամների թիվը  
 գլուղատնտեսության և անտառային գործի մեջ  
 2,000,000. ից ավելի յե։ Այդ թվի մեջ մտնում էն  
 նաև վոչ շատ բանակությամբ միջակ գյուղացի-  
 ներ։

Ուրիշ կերպ ասած՝ արտասահմանում դասակար-  
 գային միության մեջ կազմակերպված գյուղատնտե-  
 սական և անտառային բանվորներից ամեն մեկին  
 ընկնում ե 4 կազմակերպված կույակ-կալվածատեր-  
 չասկանալի յե, վոր գյուղատնտեսական և  
 անտառային բանվորներն իրենց ալդքան թուլ-  
 կազմակերպվածությամբ և դասակարգային ու-  
 ժերի ալդպիսի հարաբերությամբ չեն կարող  
 հաջող կերպով կռվել ձեռնարկատերերի հետ։

Այժմ հարց տանք, թե ինչու արտասահմա-  
 նում գյուղատնտեսական և անտառային բանվոր-  
 ները շատ ավելի վատ են կազմակերպված, բան  
 Խորհրդացին Միության մեջ։ Իսչեւ արտա-  
 սահմանում կա ձեռնարկատերերի միություն,  
 այն ժամանակ, յերբ մեզանում չկան կույակ-  
 ների միություններ։ Այդ հարցերին պիտի

պատասխանենք. Վորովինեաւ Խորհրդային Միության մեջ պետությունը բանվորական ե, իսկ արտասահմանյան բոլոր յերկրներում պետությունը բուժուական ե:

Մեզանում գյուղատնտեսական և անտառային բանվորների արհեստակցական միության մեջ մտնելու գործին մեր խորհրդային պետությունն ոգնում ե և արգելում կուլակության կազմակերպվելու փորձերը։ Արտասահմանում, ընդհակառակը, բուրժուական պետությունն ամեն կերպ ոգնում ե կալվածատերեր-կուլակներին կազմակերպվելու և խանգարում ե բանվորներին։ Արտասահմանում գյուղատնտեսական և անտառային բանվորները յերբ ուզում են կազմակերպվել դասակարգությին արհեստակցական միության մեջ, բուրժուական պետություններն իրենց բոլոր ուժերով ոգնում են կալվածատերերին, կուլակներին, ձեռնարկատերերին խանգարելու, թույլ չտալու այդ և ճնշելու. գյուղատնտեսական և անտառային բանվորների դասակարգային արհեստակցական միություններում կազմակերպվելու, միանալու շարժումը։

Եերբ Խորհրդային Միքրի Խաբար գյուղում, 1926 թ. գարնանը, կուլակ Աբրամ Մալրշել սպանեց առաջ բաշված բատրակ՝ պրոֆմիության կազմակերպիչ Միգակովին, խորհրդային արդա-

բաղատությունը միջամտեց այդ գործին, սպանողին ձերբակալեց և դատի հանձնեց. սեղադրվող Մալրշնին դատարանը դատապարտեց գնդակահարության, և նա գնդակահարվեց: Արտասահմանում՝ Վենդրիալում, Իտալիայում, Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Կանադայում և ուրիշ յերկրներում, յերբ պրոֆսիության կազմակերպչին սպանում են կալվածատերերի և անտառատերերի վարձկանների միջոցով (իսկ այդպիսի դեպքեր այնտեղ շատ են լինում), սպանողը մնում է անպատիժ, դեռ իր պաշտոնի մեջ ել նրան առաջ են քաշում:

Արտասահմանում վոչվոք չի խանդարում կալվածատերերին և կապիտալիստներին հեռացնելու աշխատանքից ակտիվ և համարձակ բանվորներին: Ամեն մի կալվածատեր հայտնում է իր կողմից. հեռացված բատրակի անուն-ազգանունը ուրիշ կալվածատերերի, վոր նրան զործ չտան: Կազմվում ե այսպես կոչված «սև ցուցակ», և ում անունն ընկնում է այդ «սև ցուցակ» մեջ, նա արդեն դատապարտմում է անգործության և սովի: Այդպիսի դեպքում «սև ցուցակ» ընկածներն ստիպված են լինում ուղղակի հեռանալ իրենց տեղից և ուրիշ տեղ գնալ մի կտոր հաց աշխատելու համար: Այդպիսի դեպքերում բուշժուական պետությունը չի ոգնում բատրա-

կին, ընդհակառակը՝ հալածում ե, բանտարկում  
և աքսորում:

Խորհրդային Միության մեջ վոչվոք իրա-  
վունք չունի բանվորին գործից հեռացնել հասա-  
րակական և պրոֆեսսիոնալ աշխատանք կատա-  
րելու համար։ Այդ հարցը նախատեսված ե  
համապատասխան որենսոգրքի մեջ։ Խորհրդային  
իշխանությունը խիստ կերպով պատժում ե այդ  
որենքը խախտողներին։ Խորհրդային Միության  
մեջ բանվոր դասակարգը, սրանց թվում և բատ-  
ր սկությունը կազմակերպված են դասակարգա-  
յին պրոֆեսսիոնալ միություններում, գյուղա-  
ցիությունը՝ կոռպերացիաներում, բանվոր դա-  
սակարգը չքավոր և միջակ գյուղացիության  
հետ միասին՝ խորհուրդներում, իսկ շահագործող-  
ները՝ կապիտալիստները և կուլակները զրկված  
են կազմակերպվելու իրավունքից։

Այդ որինակները ցույց են տալիս, վոր բատ-  
րակությունն արտասահմանում միքանի անգամ  
ավելի թույլ ե կազմակերպված, քան Խոր-  
հրդային Միության մեջ, և այդ նախ և առաջ  
այն պատճառով, վոր այնտեղ պետությունը  
բուրժուական ե, իսկ մեզանում՝ բանվորական։  
Բուրժուական պետությունն աջակցում ե կալվածա-  
տերերի, կուլակների կազմակերպություններին և  
ննշում գյուղատնտեսական և անտառային բանվոր-  
ների շարժումը։

Արդյունաբերական բանվորները պործարանատերերի ու զավոդատերերի հետ ունեցած իրենց կովկանից ընթացքում, գյուղատնտեսական և անտառային տնտեսության բանվորներից գեռառաջ սարքել են իրենց դասակարգային կազմակերպությունները։ Այդ տեսակի տից արդյունաբերական բանվորների դասակարգային կովկի փորձն ավելի շատ ե, հենց այդ պատճառով ել վերջիններս պետք ե ամեն կերպ ոգնեն և աջակցեն գյուղատնտեսական բանվորների միացման կամ կազմակերպման գործին։

Ընկեր Լենինը 1917 թ. հունիսին «Պրավդա» գաղեթում՝ «Ռուսաստանում գյուղական բանվորների միություն կազմակերպելու անհրաժեշտության մասին» իր հոդվածում գրել ե.

«Քաղաքի բանվորներն ավելի շատ միջոցներ, ուժեր և փորձ ունեն։ Պետք ե ուղղակի այդ ուժերի մի մասը տալ գյուղական բանվորներին, ոգնել նրանց, վոր նրանք վոտքի կանգնեն։»

Խորհրդային Միության մեջ կոմմունիստնեների, բայց և կեների կողմից ղեկավարվող բանվորական շարժումը միշտ կատարել ե ընկ. Լենինի այդ պատգամը։ Արտասահմանում պրոֆեսիոնալ շարժման դլիսին մեծ մասով դեռ կանգնած են համաձայնողականները, վորոնք հրաժարվում են վորեւ կերպ ոգնելու գյուղա-

տնտեսական և անտառային տնտեսության բանվորների շարժման ամրապնդմանը և ամենից շատ վախենում են բանվոր դասակարգի, նույն թվում և բատրակության վճռական պայքարից, վոր ուղղված և կապիտալիստների ու կալվածատերերի դեմ:

Ավելին՝ Վենգրիայում պրոֆմիության մենակիկ ղեկավարներն առանձին պայման են կապել իրենց հականեղափոխական կառավարության հետ, վորնրանք հրաժարվում են բատրակության մեջ վորեւել պրոֆեսսիոնալ աշխատանքներ կատարելուց։ Վենգրիայի մենակիկների ղեկավարներից մեկն յերեսպաշտությամբ հայտարարել ե, թե քաղաքի բանվորներին վոչվոք չի ոգնել, վորնրանք կազմակերպվեն, թող գրուղական բանվորներն ել իրենք իրենց կազմակերպվեն։ Խորհրդային Միության ամբողջ պրոֆեսսիոնալ շարժումը մըշտական յեղբայրական ոգնությունն ե ցույց տալիս ավելի թույլ և հետամնաց գյուղատնտեսական և անտառային տնտեսության բանվորների՝ բատրակության դասակարգային շարժմանը։

Իզուր չե՛ 1926 թ. դեկտեմբերին կայացած համարութենական արհեստակցական միությունների 7-րդ հայագումարը Միությունների Կենտրոնական Խորհրդի ղեկուցման առթիվ ընդունած բանաձևում ասել ե, վոր նա գրուղատնտեսական անտառային բանվորների սիության

աշխատանքների ուժեղացումը, ինչպես և այդ միության ամրացումը, դասակարգային դասատիարակությունը, նրա միջից պրոֆակտիվի լայն կերպով առաջքաշումը և բատրակության ներդրավումը գլուղի խորհրդային հասարակության մեջ ամբողջ արհեստակցական շարժման գործն և համարում։

Մեծագույն մասով արտասահմանան պրոֆմիության համաձայնողական ղեկավարները հրաժարվում են գյուղատնտեսական բանվորներին վորեվե աջակցություն ցույց տալուց։ Այդ ել յերկրորդ պատճառն և այն բանի, վոր արտասահմանում բատրակությունն ավելի թույլ ե կազմակերպված, քան մեզ մոտ։

## 2. ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ԳՅՈՒՂԱՏԸՆ- ՏԵՍՎԿԱՆ ՅԵՎ ԱՆՏԱՌԱՑԻՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՎՐԱ

Համաշխարհային պատերազմի ժամանակ քիչ գյուղատնտեսական բանվորներ չեն կռվել պատերազմի դաշտում։ Քանի նրանք կռվում եյին, գտնվում եյին պատերազմի մեջ, նրանց հուլսերով եյին, կերակրում թե նրանց դրությունը կլավացնեն, հողով կրավարեն։

Պատերազմը վերջանալուց հետո բուրժուակիան և կայվածատիրությունը սկի չմտածեցին ել իրենց խոստումներն իրազործել։ Այդ դեպքում գլուղատնտեսական և անտառալին բանվոր-

ները համոզվեցին, վոր նրանք իրենց դրությունը կլափացնեն միայն այն դեպքում, լեռք նրանք, իրենց լեղբալրակից քաղաքի բանվորների նման կազմակերպվեն։ Նրանք հասկացան, վոր միմիայն դասակարգային կովի միջոցով կարող են իրենց դրությունը փոխել։ Հոկտեմբերյան հեղափոխության որինակը քիչ չոգնեց կապիտալիստական լերկրների բանվորների դասակարգային կովի կենդանացմանը։

Արտասահմանյան բոլոր լերկրներում տեղի ունեցան բատրակային գործադուլներ հարյուր հազարների մասնակցությամբ։ Գյուղատնտեսական և անտառային բանվորների շարքերը միքանի անգամ մեծացան, նրանք միքանի անգամով աճեցին։ Այն թվականներին գերմանական գյուղատնտեսական բանվորների միության ան դամների թիվը հասավ 800,000-ի, համարյանույնքան անդամներ կային և գյուղական բանվորների իտալական ֆեդերացիայի (միության) մեջ։

Քաղաքներում սկսեցին կազմվել բանվորների և զինվորների պատգամավորների խորհուրդներ։

Գյուղերում կազմակերպվում ելին բատրակների, (ինչպես, որինակ՝ Լեհաստանում Ֆինլանդիայում, Լատվիայում, Եստոնիայում, Վենգրիայում, Գերմանիայում), և գյուղացիական խորհուրդներ։

Կալվածատերերը և կապիտալիստներն արտասահմանում սկսեցին վախենալ աշխատավոր մասսաների հեղափոխական շարժումներից։ Կոմմունիստական հեղափոխությունը նրանց համար սարսափելի ուրվական եր։

Նրանք հարկադրված զիջողություններ են անում բանվորների և բատրակների և գլուղացիների ուժեղ շարժմանը։

Մի շարք յերկրներում բանվորներին և բատրակներին հանգստացնելու համար սկսում են աշխատավարձն ավելացնել և բանվորական որվատեսողությունը կրճատել։ Նույնիսկ միքանի յերկրներում գյուղատնտեսության մեջ, խոշոր կալվածքներում, բանվորներին հաջողվում ե սահմանել տարեկան միջին հաշվով 8 ժամվա բանվորական որ։ Միաժամանակ բոլոր յերկրներում աշխատանքի որենսդրությունն ընդլայնվում ե։


Մի շարք յերկրներում գլուղացիական շարժումները հանգստացնելու համար բուրժուազիան և կալվածատերերն սկսում են մշակել «հողային բարենորոգությունների», այսինքն հողատիրության որենքների փոփոխության ծրագիր։

Բանվորները, բատրակները, գյուղացիները համաձայնողականների ազգեցությումբ յենթարկվում են կապիտալիստական խորամանկություններին։ Հեղափոխական շարժումը թուլանում ե.

վում են։ Կապիտալիստների և կալվածատերերի կողմից նոր հրատարակված հողային որենքներով կալվածատերերը փոչինչ չկորցրին, այլ շահվեցին նրանցից կուլակները և հարուստ գյուղացիները։

Կապիտալիստների և կալվածատերերի հարձակումն ավելի ուժեղ կերպով պայթում ե ավելի թույլ կազմակերպված գյուղատնտեսական և անտառային բանվորների գլխին։ Այդ հարձակումը ղեկավարում են կուլակացին և կալվածատիրական ուժեղ միությունները։ Բատրակների միությունների հալածանքները նախապատերազմյան հալածանքների համեմատությամբ կրկնապատկում, շատանում են։ Բատրակների միությունների լավագույն ղեկավարներին ձերբակալում, բանտ են նետում, սպանում։ Շատ-շատերն ստիպված են լինում հալածանքների պատճառով փախչել իրենց յերկրներից։ Առանձնապես սպիտակ տերը որը իշխում եր գյուղատնտեսական և անտառային բանվորների վրա ֆինլանդիայում, Վենգրիայում, Իտալիայում, Բոլգարիայում և Եստոնիայում։ Գնդակահարված, բանտարկված, աքսորված և արտասահման փախչելու հարկադրված ակտիվ բատրակների թիվը հասնում է տասնյակ հազարների։

Գյուղատնտեսական և անտառային բանվոր-



ների շարժմանը հասցվում ե շատ մեծ հարված։ Միայն հողային աշխատավորների իտալական միության անդամների թիվը պակասում ե 750 անգամ. 750,000 անդամից մնում են միայն 1000 հոգի։ Մյուս յերկրներում նույնպես միության անդամների թիվը պակասում է։ Բոլգարիայի և Եստոնիայի գյուղատնտեսական բանվորների դասակարգալին կազմակերպությունը բոլորովին քայլայվում ե և անցնում արդեն գաղտնի, ընդհատակյա աշխատանքի։

Իտալիայում, շատ տեղերում բատրակային կազմակերպությունները հարկադրված են թագնըվել և աշխատել գաղտնի, ընդհատակյա։

Կալվածատերերը և կուլակներն ուժով ստիպում են գյուղատնտեսական բանվորներին մըտնել կալվածատերերի կողմից ղեկավարվող վոչ պրոլետարական միությունների մեջ։ Այսպես, որինակ, Իտալիայում աշխատանք են ստանում կալվածքներում միայն այն բանվորները, վորոնք անդամագրված են «գյուղատնտեսական բանվորների ֆաշիստական ազգային կորպորացիայի» սկ հարյուրակային միության մեջ։

Այն բատրակները, վորոնք հրաժարվում են այդ սկ հարյուրակային միության անդամ լինելուց, նրանց ծեծում են, տանջում, չարչարում։ Այդ տեսակետից գարմանալի չե, վոր իտալա-

կան ազգային ֆաշիստական միության մեջ թղթի վրա հաշվում են 700,000 հոգի:

Կալվածատերերը և կուլակները քայքայելով գյուղատնտեսական և անտառային բանվորներն կազմակերպությունները, անցնում են և նրանց աշխատանքային բարելավումների, բանվորների ձեռք բերած նվաճումների վոչնչազմանը: Այդ նրանց նույնպես լրիվ կերպով հաջողվում եւ: Այժմ արտասահմանում մեծ պատերազմից հետո ձեռք բերած գյուղատնտեսական բանվորների նվաճումների վոչ միայն հետքը չկա, այլև ավելի ծանրացել և վատացել եւ նրանց դրությունը նույնիսկ նախապատերազմյան դրության հայեմատությամբ:

Դերմանական բատրակի այժմյան աշխատավարձը կազմում եւ նախապատերազմյան նրա աշխատավարձի միայն 65 տոկոսը, սա նշանանակում ե, վոր յեթե առաջ մի վորոշ ժամանակում վաստակում եր 100 ռուբլի, ներկայումս նա նույն ժամանակի ընթացքում ստանում ե միայն 65 ռուբլի:

Գյուղատնտեսական և անտառային բանվորների աշխատավարձն իջեցվում ենաև ուրիշ յերկրներում. աշխատավարձն ուժեղ կերպով պակասեցնում են առանձնապես այնպիսի յերկրներում, ուր խոշոր հողատիրություն կա, ինչպես, որինակ,

Գերմանիայում։ Նկատելի չափով աշխատավարձը պակասեցվում է խոշոր կալվածատիրության մեջ, պակաս նկատելի՝ գյուղացիական տնտեսություններում։

Պատերազմից հետո գյուղատնտեսական և անտառային բանվորների աշխատանքի ժամանակը սահմանափակող որենքները վոչ մի տեղ չեն վերացրել, բայց և վոչ մի տեղ նրանք չեն գործադրվում։ Համարյա բոլոր լերկրներում գյուղատնտեսական բանվորների բանվորական որն որենքով չի սահմանափակված։ Միքանի յերկըրներում, որինակ՝ Վենգրիայում, նույնիսկ որենքով վորոշված ե, վոր գյուղատնտեսական բանվորների աշխատանքի տևողությունը, անկախ նրանից, թե նրանք վորտեղ են աշխատում՝ կալվածքներում թե կուլակային տնտեսություններում, պիտի լինի առավոտվածեցից մինչև իրիկվա մուլթն ընկնելը։

Թե ինչքան ե արտասահմանում մեծացել բատրակների աշխատանքի ժամանակի տևողությունը, սենք այդ կարող ենք տեսնել և Խտալիայի որինակից։ Պատերազմից հետո Խտալիայի գյուղատնտեսական բանվորները ձեռք բերին 8 ժամվա բանվորական որ։ Այժմ Խտալիայում բանվորական որը միջին հաշվով տևում է  $10^{1/2}$  ժամ։ Անգլիայում գյուղատնտեսական բանվորների շա-

բաթվա աշխատանքի ժամերի տևողությունը 1922  
թ. 49 ժամ եր, իսկ արդեն 1925 թ.—54 ժամ  
և դեռ ելի մեծանում եւ:

Հատկապես ծանր են գյուղատնտեսական  
բանվորների աշխատանքի պայմանները Աֆրի-  
կայի, Ասիայի և Ավստրալիայի գյուղատնտեսա-  
կան բանվորների գաղութային և կիսագաղու-  
թային յերկրներում: Աշխատավարձը՝ կապիտա-  
լիստական կալվածքներում այնքան քիչ ե, վոր  
հազիվ բավականացնում ե քաղցից փրկվելու  
կամ սովից չմեռնելու համար, իսկ աշխատանքի  
ժամերի տևողությունը հասնում է 14—17 ժամ  
որական: Այդ յերկրներում ձմեռը ամառվանից  
տարբերվում է միայն նրանով, վոր ձմեռ ժա-  
մանակ շատ անձրև ե գալիս, իսկ դաշտային  
աշխատանքները աեղի լին ունենում ամբողջ  
տարվա ընթացքում, անընդհատ):

Այդ կալվածքներում սև և դեղին ցեղերին  
պատկանող բանվորները—բատրտկները գտնվում  
են ստրուկի վիճակում: Գործի մտնելիս նրանք  
սովորաբար ստորագրում են 3—5 տարի ժամա-  
նակով պայմանագիր: Վայ այն բատրակին, վոր  
կմտածի այդ ժամանակից առաջ հեռանալ կամ  
փախչել այդտեղից: Նրան իսկույն վ ըստում են  
վ ստիկանության միջոցով և հանձնում կալվա-  
ծատիրոջ, վորն արդեն նշո՞ն չի խնայում յեն-

Թարկելու անարգանքի և ծեծի ու ամեն տեսակ շարշարանքի: Գյուղատնտեսական բանվորները գաղութներում դրանք կալվածատերերի ստրուկներն են:

Շատ յերկրներում գյուղատնտեսական բանվորները փորձել են պատասխանել կապիտալի հարձակմանը գործադուլալին շարժումով: Սակայն չունեն ալով հեղափոխական պրոֆմիութենական դեկավարություն, ջլատված ուժերով հանդես գալով, նրանք կրել են պարտություններ:

Միքանի դեպքերում կալվածատերերը խորամանկությամբ ընդառաջ են գնացել բանվորների միքանի պահանջներին, վորապեսզի վորոշամանակից հետո վորսան բանվորներից ակտիվներին, հեռացնեն նրանց և ավելի վաս թարացնեն նրանց աշխատանքի պայմանները: Շատ դեպքերում ել գործակալները նրանց ճնշում են վորտիկանության և գործադուլը ճնշող հատուկ ջոկատների միջոցով:

Յերբեմն բոլոր գործադուլավորները ձերբակալվել են և նետվել բանտ մինչեւ համաձայնվել են առանց պահանջների աշխատել. գործադուլների ալդ յեղանակի ճնշում տեղի յեռնեցել

1925 թ. Վենգրիայում. Հազվագյուտ չեն յեզ այն դեպքերը յերբ գյուղատնտեսական բանվորների գործադուլները ճնշվել են սվիններով ու գնդակներով:

Այսպես, որինակ, 1922 թ. Արգենտինայում

(Հարավային Ասերիկա) առաջանում ե գործադրություն. այդ գործադրությունը մասնակցում են 3000 դյուզատնտեսական բանվոր։ Այդ գործադրությունը դեմ կառավարությունը հանում ե իր զորքն ու վուտիկանությունը և միտինգի ժամանակ նրանցից համարյա կեսին գնդակահարում։

Կալվածատերերը, կուլակները, կապիտալիստները գյուղատնտեսական բանվորների ամեն մի ընդդիմադրությունը անխնա կերպով վոչընչացրել են։

Յերբ գյուղատնտեսական և անտառային բանվորներին վորևե կերպ հաջողվել ե ընդդիմանալ կալվածատերերի, կուլակների հարձակմանը, այդպիսի դեպքերում ել կալվածատերերին, կ ւակներին ոգնության են հասել համաձայնողական դեկավարները և խանդարել պայքարը։

### 3. Ի՞ՆՉՊԵՍ ՀԱՄԱՍՅՆՈՂԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ-ՆԵՐԸ ԴԱՎԱՀԱՆՈՒՄ ԵՆ ԲԱՏՐԱԿՎՈՒԹՅԱՆ ԾԱՀԵՐԻՆ

Համաձայնողականները գյուղատնտեսական և անտառային բանվորներին քարոզում են «դասակարգային հաշտություն» կալվածատերերի, կուլակների և անտառատերերի հետ։ Նրանք ասում են, վոր բանվորներին պետք չե դասակարգային վճռական կովի և պրոլետարական հե-

ղափոխության միջոցով բարելավել իրենց վիճակը Նրանց կարծիքով գուղատնտեսական բան վորները պետք ե սպասեն, մինչև իրենց տերերը շնորհ կանեն մի վորեւե պատառ նրանց նետեր և պետք ե սպասեն իրենց դրության բարելավանը վոչ թե դաստկարգային կովի, այլ կալվածատերերի, կուլակների և անտառատերերի հետ խաղաղ ռհամաձայնության»:

Այդ պատճառով համաձայնողականները — մենշեվիկները, դաշնակները խանգարում են բատրակների դասակարգային կոխվը.

Ամեն անգամ, գործատերերի զեմքանվորների մղած վճռական կոիմսերի ժամանակ համաձայնողականները հարձակում են գործում բանվորների վրա թիկունքից, պառակում, քայլայում նրանց մարտական շարքերը և հանձնում նրանց իրենց դասակարգային թշնամիների ձեռքը:

Հետպատերազմյան սկզբի տարիներին, լերը գյուղատնտեսական բանվորների համար ստեղծվել ելին դասակարգային կովի ավելի բարեհաջող պարմաններ, և լերը կալվածատերերը և կուլակներն ամեն տեղ ընդառաջ ելին գնում բատրակներին զիջողություններով, համաձայնողական ղեկավարներն ահագին ուսմունք են հնարում այն մասին, թե ինչու բատրակությունը չպիտի զիմի գործադուլի:

«Ժողովուրդը սովից հլուծվել ե», ասում են բոլոր յերկրներում մենշևիկները, սոցիալ-դեմոկրատները բատրակությանը, ռդործադուլները գյուղատնտեսության մեջ նվազեցնում են շուկա յեկող պրոդուկտների — մթերքների քանակությունը և մեծացնում սովը ժողովուրդի համար»։ Մենշևիկներն այդպիսի ագիտացիայովքիչ գործադուլներ չեն խափանել և քաղաքի բանվորներին գրգռել բատրակության դեմ։

Բայց յերբ, այնուամենայնիվ, գլուղատնտեսական և անտառային բանվորների գործադուլը ծավալվում ելին, համաձայնողականներն ինչի վոր կարող ելին, դիմում եյին, վորպեսզի գործադուլը վիժեցնեն և ոգնեն ձեռնարկատերերին հաղթանակը տանելու։ Այդպես են վերաբերվել համաձայնողականները 1923 թ. Գերմանիայի շրջաններից մեկում՝ Սիլեզիայում, ուր 120,000 գլուղատնտեսական բանվորներ գործադուլ ելին արել իրենց աշխատավարձի փողալին մասի իջեցման համար։ Գյուղատնտեսական բանվորների գերմանական միությունը, վորի գլուխը կանգնած են մենշևիկները, հայտարարեց այդ գործադուլը «վալրի», ուրիշ խոսքով ասած, պըռֆիության հետ չհամաձայնեցված։ Միության ղեկավարներն ստիպեցին գործադուլավորներին աշխատանքի անցնել։ Այդ դրության հե-

տեսանքով տասնյակ հազարավոր բանվորներ միաւթյունից հեռացան՝ նրա ղեկավարներից հիասթափված, հուսահատված:

Լեհաստանի գլուղատնտեսական բանվորների հսկայական գործադուլը, վորին մասնակցում ելին 300,000 հոգի, նույն միջոցներով համաձայնողականները խանգարում են: Գործադուլի առաջին բռնկումը տեղի յեւ ունենում ապրիլի 1-ին, գարնանային աշխատանքների սկզբին:

Միաւթյան համաձայնողական ղեկավարները դադարեցնում են գործադուլը, հայտարարելով, վոր «հետաձգում են» մինչև հացի հավաքելը, աշուն:

Յերբ վոր հացի հավաքման շրջանում բարբակների գործադուլը նորից բռնկվում ե նոր ուժով, համաձայնողական ղեկավարները կարգադրում են դադարեցնել գործադուլը, ի նկատի առնելով կառավարական հանձնաժողովի հետ կնքած իրենց համաձայնությունը: Համաձայն այդ պայմանագրության բատրակության աշխատավարձի վորոշ հավելում պիտի կատարվեր. բատրակությունն ալդ ի նկատի առնելով համաձայնվում ե գործադուլը դադարեցնել և դադարեցնում ե: Իսկ յերբ հացը հավաքվել է, կարգածատերերը հրաժարվում են կատարել կոլպայմանագիրը, վորը կնքել ելին պրոֆմիության

ներկայացուցիչները կառավարական հանձնաժողովի հետ։ Պրոֆսիությունն այս դեպքում ևս խայոառակ կերպով համաձայնվում ե կալվածատերերի հետ։ Միության ղեկավարների այդ դավաճանությունն ստիպում ե տասնյակ հազարավոր բատրակների հեռանալու միության շարքերից։

Ընթերցողը նախորդ գլուխներից մեկից իմացավ, վոր մենշևիկները –սոցիալ-դեմոկրատներն առհասարակ հրաժարվում են գուղատընտեսական և անտառային բանվորների պրոֆմիության աջակցելուց։ Ցեթե վորեն յերկրում գոյություն ունի գյուղատնտեսական բանվորների միություն, համաձայնողական առաջնորդները վոչ մի միջոցի առաջ կանգ չեն առնում, վորպեսզի այդ միությունը վոչնչացնեն, յերբ նրանք տեսնում են, վոր դրանից իրենք պիտի շահվեն։

Ցերբ միքանի տարի առաջ Զեխո-Սլովակիայի գյուղատնտեսական և անտառային բանվորների համագումարին վորոշում ընդունվեց վճռական հեղափոխական դասակարգային պայքար տանելու և կարմիր Պրոֆինտերնին միանալու անհրաժեշտության մասին, այդ դեպքում միքանի պրոֆմիութենական ղեկավարներ վախենալով կորցնել իրենց պաշտոնները՝ միության մեջ պառակտում են առաջ բերում։

Նրանք կազմակերպում են գյուղատնտեսական և անտառային բանվորների ինքնուրույն միություն և նրա մեջ առան իրենց գյուղավորած հին միության տեղական բաժանմունքները։ Այդ բաժանումն առաջ ե բերում Զեխո Սլովակայի գյուղատնտեսական և անտառային բանվորների շարքերում ուժեղ խառնակություն և շատերը նրանցից չիմանալով՝ վոր միության մեջ մտնել, մնում են առանց պրոֆմիության։ Շնորհիվ համաձայնողական առաջնորդների պառակտիչ աշխատանքի կազմակերպված բատրակների թիվը խիստ կերպով կրճատվում է։ Զեխո-Սլովակիայի նման, համաձայնողական առաջնորդները պառակտում են գյուղատնտեսական և անտառային բանվորների միությունը նաև Ֆրանսիայում։

Գյուղատնտեսական և անտառային բանվորների շահերին դավաճանելու գործում համաձայնողական առաջնորդները բացարձակորեն միանում են կալվածատերերի կողմից գործադրված գյուղատնտեսական և անտառային բանվորների հեղափոխական շարժումների հետապնդումներին և հալածանքներին։

Յերբ 1926 թ. Վենգրիայում բուրժուական դատարանը դատապարտում ե յիշարամյա բանտարկության վենգերական գյուղատնտեսական և անտառային բանվորների վարչության յերեք ան-

դամներին բանվորական հեղափսխական շարժումներին մասնակցելու համար, վարչության մեջ մենշևկիներն իսկույն շտապում են հեռացնել բանվորական շարժման մասնակցելու համար դատապարտված յերեք անդամներին վարչության կազմից:

Կալվածատերերը յեվ կապիտալիստները գնահատում են մենշեվիկների սեվ ծառայությունը. Այն դեպքում, յերբ Վենդրիալի հեղափոխական բանվորները բանտ են նետում, վենգերական կառավարությունը թույլ ե տալիս գյուղատնտեսական և անտառային բանվորների վարչության նախագահին անդամ լինել յերկրի որենսդրական որդանին—պարլամենտում: Ինչ խոսք, վոր նա իրըև պարլամենտի անդամ ստանում ե բարձրռութիկ:

Ուրիշ յերկրներում կալվածատերերը վճարում են համաձայնողական ղեկավարներին իրեց հավատարիմ ծառայությունների համար, բանվորական շարժմանը դավաճանելու համար հողաբաժանության ընթացքում հողամասեր տալով այն ժամանակ, յերբ շարքային բատրակները հող չեն ստանում:

## 4. ԲԱՏՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Խորհրդային Միության մեջ բատրակը, հոտաղը, անտառի փալտահատը գիտե, վոր Համամիութենական կոմմունիստական (բայլշեփկների) կուսակցությունը ղեկավարում ե Գյուղատնտեսական և Անտառային Բանվորների Արհեստակցական Միության գործունելյությունը և ցույց ե տալիս նրան ամեն տեսակի աջակցություն իր աշխատանքի մեջ։**

**Առանց կոմկուսի և նրա ղեկավարած ԽՍՀՄ-ի արհեստակցական շարժման կողմից ցույց տրված աջակցության բատրակության կազմակերպության և պաշտպանության գործը, նույնիսկ խորհրդային պետության մեջ, իրաւու կերպով կդանդաղեր և կդժվարանար։**

**Արտասահմանի շատ յերկրներում կոմկուսները նույնպես մեծ ուշադրություն են նվիրում գյուղատնտեսական յեվ անտառային բանվորների շարժման։**

**Կոմմունիստները մերկացնում են մենշեկլան-սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների դավաճանական գործունելյությունը գյուղատնտեսական բանվորների շարժման մեջ։ Դեռ 1920 թ. կոմմունիստական ինտերնացիոնալի յերկրորդ համագումարն ալդ գործունելյության մասին հետևելուն ե ասել։**

«Կոմմունիստական ինտերնացիոնալի համագումարը դատապարտում ե այն սոցիալիստ համարվող դավաճաններին, վորոնք ընդունակ են վոչ միայն անտարբեր լինել գլուղի գործադուլային շարժման նկատմամբ, այլև դուրս գալ նրա դեմ սպառման մթերքների արտադրանքը պակասեցնելու վտանգի տեսակետով։

Միևնույն ժամանակ տարբեր յերկրներում կոմկուսները աշխատանքի յեն անցնում բատրակության մեջ։ Կոմմունիստները, մինչև այդ բանվորական շարժումից հեռու մնացած զյուղատնտեսական և անտառալին բանվորների միլիոնավոր շերտերի մեջ առաջ են բերում ակտիվություն և դասակարգային գիտակցություն։

Կոմմունիստները ձգտել են կազմակերպել և դաստիարակել բատրակությունն իբրև գյուղի հեղափոխության առաջապահի և նրա միջոցով գյուղում ամբազնդել բանվորության և գյուղացիության դաշինքը։

Կոմմունիստական ինտերնացիոնալի Զ. ՐԴ համագումարը Լենինի կողմից կազմված, ագրարային հարցի վերաբերմամբ բանաձևում ասել ե. «Բոլոր յերկրների կոմմունիստական կուսակցությունների հիմնական խնդիրն ե զյուղական աղբաբնակության ուրիշ խմբերից առանձին այդ դասակարգի կազմակերպությունը, ներառնելով

անտառալին բանվորներին, կալվածքների արհեստավորներին և այլն (և քաղաքական, և զինվորական, և պրոֆեսուրական ուղղությամբ), տանելնրա մեջ ուժեղ պրոպագանդ և ագիտացիա, գրավել նրան խորհրդալին իշխանության և պրոլետարիատի դիկտատուրայի կողմը:

Շարունակության մեջ, նույն բանաձևում ասված ե, վոր կոմմունիստական կուսակցությունները պետք ե առանձին ուշադրություն դարձնեն այդ մասսաների հեղափոխական պայքարին և նրա դաստիարակության ու կազմակերպության:

Հենց այդ տեսակետից անհրաժեշտ է համարված կոմմունիստական ինտերնացիոնալի շրդ համագումարի կողմից աջակցել գյուղատնտեսական բանվորներին, անհրաժեշտ համարել կոմմունիստներին մասնակցել այդ միությունների աշխատանքներին:

Արդեն կոմմունիստները նստոնիայում, Նորվեգիայում, Ֆինլանդիայում նախաձեռնություն են վերցրել իրենց վրա գյուղատնտեսական բանվորների միության կազմակերպություններում: Մի շաբաթ այլ յերեններում կոմմունիստները համառ հեղափոխական աշխատանքների հետևանքով հաջողություններ են ունեցել վորոշ միու-

թյուններ համաձայնողականների ազդեցությունից ձեռացնելու գործում։

Կոմմունիստները կազմակերպելով և դաստիարակելով գյուղատնտեսական և անտառային բանվորներին՝ տապալելու կատիտալիզմը և ստեղծել կոմմունիստական հասարակակարգ, վորի ժամանակ պիտի վոչնչանան ամեն տեսակի շահագործումները, — միաժամանակ անտես չեն առել բատրակության առողջա պայքարի խնդիրները, ինչպիսիք են՝ աշխատավարձի բարձրացումը, աշխատանքի ժամանակի տևողության կրճատումը, գյուղաշխատանքալին որենսդրության ընդլայնացումը և այլն։ Համաձայն կոմինտերնի համագումարի բանաձեկի, կոմմունիստներն ամեն կերպ ոգնել են գյուղատնտեսական և անտառային բանվորներին գործադուների միջոցով բարելավելու իրենց դրությունը։

Մի շարք էեր կրներում. (Լեհաստան, Եստոնիա, Էստոնիա, Գերմանիա) բանվորացյուղական շարժման վերելքի շրջանում, կոմմունիստները բացի գյուղատնտեսական բանվորների պրոֆմիութենական բջիջներ կազմակերպելով, աջակցել են նաև «բատրակների պատգամավորների խորհուրդ» ստեղծելուն, վուն ընդդրկում են պրոֆմիություններում կազմակերպված բատրակությունը, և նրանից դուքս գտնվածներին։

Բուրժուական պարլամենտներում կոմմունիստների ֆրակցիաներն առաջադրում են գյուղատնտեսական բանվորների համար պահանջների ծրագիր։

Կոմինտերնի 1922 թ. համագումարը հաստատեց, վոր Շբոլոր յերկրներում, ուր գոյություն ունի բառի իսկական իմաստով գյուղատնտեսական պրոլետարիատ, այդ շերտին վերապահված ե գյուղի հեղափոխական շարժումների մեջ կարևորագույն դեր կատարել։ Կոմմունիստական կուսակցությունները, հակառակ սոցիալ-դեմոկրատների, վորոնք գյուղական պրոլետարիատի վրա հարձակվում են թիկունքից վերջինիս դասակարգային կռվի ընթացքում, աջակցում և խորացնում են գյուղատնտեսական պրոլետարիատի ամեն տեսակի պայքարը իր տնտեսական, սոցիալական և քաղաքական դրությունը բարելավելու համար։

Կոմկուսակցությունների կողմից ցուցաված այդ աջակցության, շնորհիվ հետպատերազմյան շրջանի սկզբի տարիներին գյուղատնտեսական և անտառային բանվորները մի շարք նվաճումներ ձեռք բերին։

Սակայն արտասահմանյան կոմկուսները դեռ յերիտասարդ ելին, նրանք մեծ մասամբ չունեցին գյուղաշխատանքների փորձ։ Այդ պատճառով ել

համաձայնողականներին հեշտությամբ եր հա-  
ջողվում մասսաները գրավել և գանդաղեցնել  
գյուղատնտեսական և անտառային բանկու-  
թյան շարժումները:

Այսպես թե այնպես, բացի Խորհրդային Միու-  
թյան գյուղատնտեսական բանվորների միու-  
թյունից, կան և հեղափոխական արհմիություն-  
ներ՝ Բոլգարիայում, Կանադայում (Հյուսիսային  
Ամերիկա), Ֆրանսիայում, Ֆինլանդիայում, Չե-  
խո-Սլովակիայում, Եստոնիայում և Հարավ-  
Սլավիայում:

Բուրժուազիան և կալվոծատերերը, մենշե-  
վիկների հետ միացած, խիստ կերպով հետա-  
պնդում են այդ հեղափոխական միությունների  
անդամներին: Բոլգարիայի և Եստոնիայի գյու-  
ղատնտեսական բանվորների միությունները վոս-  
տիկանության հալածանքի հետևանքով աշխա-  
տանքի դժվար պայմանների մեջ են. այդ միու-  
թյուններն այժմ այնտեղ աշխատում են գաղտնի  
կերպով: Այդ ե պատճառը, վոր վերոհիշյալ  
գյուղատնտեսական և անտառային բանվոր-  
ների հեղափոխական միություններում հաշ-  
վում են միայն 45,000 անդամ: Գյուղատն-  
տեսական և անտառային համաձայնողական մի-  
ություններում կան մոտ 370,000 հոգի: Բայց  
պայքարի և դասակարգային ընդհարումների

ժամանակ գյուղատնտեսական և անտառալին բանվորների հեղափոխական կազմակերպությունն ներն ոգտվում են և անկազմակերպ բատրակային մոսսաների լոյն աջակցությունից։ Նույնիսկ համաձայնողական միությունների ներսում կան խմբակներ և ֆյակցիաներ, վորոնք համակրում են կոմմունիստներին և պայքարում ընդդեմ համաձայնողական դեկավարների, ինչպես, որինակ՝ Գերմանիայի, Ավստրիայի, Լեհաստանի, Վենգրիայի գյուղատնտեսական բանվորների միություններն են։

Արտասահմանյան կոմկուսներն իրենց հետագառ համառ աշխատանքով գյուղատնտեսական և անտառալին բանվորների մեջ, չնայած բոլոր դժվարություններին, կստեղծեն գյուղատնտեսական բանվորների բազմաթիվ և ուժեղ միություններ և իրենց դեկավարությամբ այդ միությունները կտանեն այն ճանապարհով, վորով Խորհրդային Միության բատրակությունը գնում է դեպի նոր, լավագույն կյանք։

## 5. ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲԱՏՐԱԿԱՅԻՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԻՆՑԵՐՆԱՑԻՈՆԱԼ ԴԵՌԵՎԱ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԻ

Պատերազմից հետո բոլոր յերկրներում բանվորական շարժումն ուժեղացավ. այդ շարժմանը

անմաս չմնացին և գյուղատնտեսական բանվորները։ Արդեն 1920 թ. Հողանդիայի Ամստերդամ քաղաքում կայացավ իննը յերկրների գյուղատնտեսական բանվորների համագումար։ Այդ համագումարում կազմվեց Գյուղատնտեսական և Անտառային Բանվորների Միջազգային Միություն (Փեղերացիա)։

Բոլոր յերկրներում բատրակությունը հույս եր տածում, վոր միջազգային միությունը կոգնի բատրակների շարժմանը, կթեթևացնի նրանց վիճակը և կկազմակերպի բատրակային միություններ այն յերկրներում, ուր այդպիսիները դեռ չեն կազմակերպված։ Բայց բատրակների այդ հույսերը, սպասելիքները չարդարացան։

Գյուղատնտեսական Բանվորների Միջազգային Միությունը հենց իր գույթան սկզբից ընկավ համաձայնողական դեկավարների ձեռքը։ Այդ համաձայնողական դեկավարների ձեռքին նն գըտնը վուամ շատ յերկրների գյուղատնտեսական բանվորների միություններ, վորոնք միշտ բատրակների հեղափոխական կորիվը մատնում են անհաջողության շնորհիվ համաձայնողական քաղաքականության։

Այդ համաձայնողականները Գյուղատնտեսական Բանվորների Միջազգային Միության մեջ տարան նույնալիսի մասսակար աշխատանք, ինչ

վոր նրանք տանում են առանձին արհմիություններում։

Ներկայումս Բաարակների Միջազգային Միության կենտրոնը գտնվում է Բերլինում։ Այդ միությունն այժմ իր մեջ միացնում ե գյուղատնտեսական բանվորների 16 միություն 369,006 անդամով։ Միության մեջ մտնում են 14 յերկրների բանվորները։ Տարեցտարի Գյուղատնտեսական Բանվորների Միջազգային Միության անդամների թիվը ընկնում է, պակասում։ 1920 թվին այդ միության մեջ յեղել ե մինչև յերկու միլիոն անդամ, իսկ այժմ այդ թիվը հասել է յերեքհարյուր հազարի։ Այդ ցուց ե տալիս, վոր Միջազգային Գյուղատնտեսական Բանվորների Միության սոցիալ-դեմոկրատ կամ, ինչպես ասել ենք, համաձայնողական ղեկավարները, այդ միությունը իրենց վնասակար համաձայնողական բաղարականությամբ հասցըել են կործանման, բայցայման։

Այդ սիությունը վոչ միայն չկարողացավ միացնել այդ կողմից ավելի հետամնաց այնպիսի յերկրների բատրակությունը, ինչպիսին են Ամերիկան, Ասիան, Աֆրիկան, այլև նա չկարողացավ դադարեցնել իրեն արդեն միացած միությունների քայլաւումը։ Ավելին՝ Միջազգային Միությունն անուժ գտնվեց ու չկարողացավ իր շարքերում միացնել տարբեր յերկրների գյուղատնտեսական բանվորների արհմիությունները։

Մինչև այսոր ել Միջազգային Միությունը չկարողացավ իր մեջ միացնել անտառային տընտեսությունների բանվորությունը։ Այդ միություններն արտասահմանի շատ յերկրներու մղեռ մինչև այսոր ել առանձին գոյություն ունեն։

Նմանապես Միջազգային այդ Միության մեջ չեն մտնում այն հեղափոխական բատրակային դասակարգային միությունները, վորոնք չեն գրանցվում համաձայնողական ղեկավարների ձեռքին։ Այդ Միության մեջ չեն մտնում և Խորհրդային Միության բատրակային միությունները։ Մինչդեռ հենց միայն Խորհրդային Միության բատրակային կազմակերպությունների միանալը մի քանի անգամ կավելացներ միջազգային միության անդամների թիվը, ինչպես և կուժեղացներ նրա կարողությունը։

Հեղափոխական այդ պրոֆմիությունները միջազգային միությունից դուրս են մնում միության համաձայնողական ղեկավարների մեղքով։

Բազմիցս, թե Խորհրդային Միության և թե այլ յերկրների հեղափոխական բատրակային միությունները հայտնել են իրենց համաձայնությունը միջազգային միության մեջ մտնելու։ Մեր յերկրի միությունը ղեկավարվել է մի մտքով՝ միացնել բոլոր յերկրների բատրակներին բոլոր յերկրներում բատրակության համար բարելավ

վիճակ ստեղծելու համար, դասակարգավիճ հաջող պարքար վարելու:

Սակայն համաձայնողական ղեկավարները վախենում են, վոր հեղափոխական միությունների միանալը Միջազգային Միությանը կարող ե վերջ տալ իրենց ղեկավարության և տիրապետության, ուստի և հեղափոխական միությունների առաջարկները միշտ մերժում են:

Վորպեսզի արդարացնեն իրենց մերժումը բանվորական մասսաների առաջ, համաձայնողական ղեկավարները Խորհրդային Միության գյուղատնտեսական բանվորների կենտրոնական կոմիտեյին ուղղված իրենց պատասխան՝ մերժումի մեջ, ասում են, վոր իրը մեր միությունները մտնում են կոմմունիստական ինտերնացիոնալը:

Այդ պատասխանով համաձայնողական ղեկավարները լիակատար կերպով ապացուցեցին իրենց տգիտությունը զյուղատնտեսական բանվորների սիջազգային պրոֆշարժման մեջ: Խորհրդային Միության մեջ արհմիության լուրաքանչյուր անդամ լավ գիտե, վոր թեև Միությունն ընդունում և ճանաչում ե լիակատար կերպով կոմկուսի և կոմինտերնի ղեկավարությունը բանվորական շարժման մեջ, այնուամենայնիվ մեր միության կանոնադրության մեջ:

վոչ մի տեղ չի առված մեր միության կազմակերպչական միացման մասին Կոմինտերնի հետ:

Այսպես թե այնպես, իս մաճայնողական դեկավարներին հաջողվում ե պառակտել գլուղաւազնտեսական բանվորների ուժերը. շնորհիվ այդ պառակտողական քաղաքականության Միջազգային Միացնուժ ե իր մեջ միայն արևմտյան ՅԵՎՐՈՊԱՅԻ գլուղատնտեսական բանվորների միության մի մասը: Այդ սահմաններից դուրս նրա մեջ չի մտնում և վոչ մի պրոֆմիություն. այդ պատճառով ել ելապես նա իրավունք չունի կազմելու ինտերնացիոնալ, այսինքն միջազգային բանվորական կազմակերպություն:

Հասկանալի յե, վոր գլուղատնտեսական բանվորների այդ միջազգային կոչված միության համաճայնողական դեկավարները բոլորովին ել չեն մտածում դեկավարելու բոլոր լերկրների գլուղատնտեսական բանվորների դասակարգային պայքարը: Ճիշտ ե, այդ միությունը կազմակերպելու սկզբնական շրջանում նրա դեկավարները շատ ելին ճշում ընդհանուր գործադուլ հայտարարելու մասին, բայց լերը հարկավոր եր ամեն տեղ հարձակման անցած ձեռնարկատերերի հարձակումները դադարեցնել, նրանք խայտառակ կերպով նահանջեցին իրենց խոստումներից և

պաշտպանություն ցուց տվին ձեռնարկատերերին ընդդեմ գյուղատնտեսական բանվորների շահերի:

Այդպես են համաձայնողական ղեկավարները: Նրանք, փոխանակ մի վորե և տեղում բռնկված գյուղատնտեսական բանվորների պալքարին մյուս միությունների կողմից աջակցություն հաջողեցնելու, ընդակտուառակը, վոչ միայն չեն աջակցում զրան, այլև պարզապես խանգարում են նրանց: Այսպես, որինակ 1924 թ. Լեհաստանի գյուղատնտեսական բանվորների գործադուլի ժամանակ Լեհաստանի գյուղատնտեսական բանվորների ղեկավարները Միջազգային Միության ղեկավարների հաճությամբ և համաձայնությամբ հրաժարվեցին հոգուտ Լեհաստանի գործադուլավորների Խորհրդային Միության Գյուղատնտեսական Բանվորների կենտրոնական կոմիտեից ուղարկած 5000 ռուբլուց, և իտ ուղարկեցին:

1926 թ. Անգլիայի լեռնադործների մեծ գործադուլի ժամանակ անգլիական գյուղատնտեսական բանվորների միությունը ընկերական նամակագրություն և սկսում Խորհրդային Միության գյուղատնտեսական բանվորների միության հետ լեռնադործների հերոսական պալքարին աջակցություն ցույց տալու առթիվ: «Յես դիմում՝

եմ ձեզ ուժեղացնել ամեն մի ոգնություն դործադուլավորներին», զըսւմ և գյուղատնտեսական բանվորների Անգլիայի արհմիության զլսավոր քարտուղարը Խորհրդային Միության գյուղատնտեսական Բանվորների Արհմիության Կենտրոնական Կոմիտեյին։ Խորհրդային Միության և գյուղատնտեսական, և անտառային անտեսությունների բանվորները լարեցին իրենց բոլոր ուժերը ոգնություն ցույց տալու Անգլիայի գործադրություններին։ Անգլիայի լեռնագործների գործադրությունը 200 որվան ընթացքում խորհրդային Միության գյուղատնտեսական բանվորները, մյուս բանվորական կաղմակերպություններին համահավասար, իրենց աշխատավարձից հատկացումներ կատարեցին հոգուտ Անգլիայի լեռնագործ գործադրությունների։

Յերբ վոր գյուղատնտեսական բանվորների ախաղես կոչված Միջազգային Միության համաձայնողական ղեկավարներն իմանում են, վոր ինչ վոր կապ ե սկսվել Անգլիայի գյուղատնտեսական բանվորների և Խորհրդային Միության գյուղատնտեսական բանվորների միջև, նրանք շտապում են քննել այդ հարցը և հանել առանձին վորոշում։

Զկարծեք, վոր նրանք իրենց վորոշումով կոչ պիտի անեն մյուս յերկրների գյուղատնտե-

սական բանվորներին հետեւելու Խորհրդային Միության գյուղատնտեսական բանվորների որինակին:

**Վոչ:** Այդ վորոշումով համաձայնողական ղեկավարներն առաջարկում են բոլորին վոչ մի կապ չպահպանել «Մոսկվայի հետ»:

Այսպես, Գյուղատնտեսական Բանվորների Միջազգային Միության ղեկավարները հարված հասցրին անգլիական գործադուլավորներին թիկունքից յեվ դրանով իրենց խայտառակ մասնակցությունը ցուցահանցին անգլիական լեռնագործների հերոսական գործադուլի ծախողման մեջ, Նսան արարքներով նրանք վաստակեցին բանվորական հեղափոխական պայքարի ստոր դավաճանների անունը:

Գյուղատնտեսական Բանվորների Միջազգային Միության ղեկավարները բոլորովին չեն քաշվում բացարձակ կերպով հաստատելու իրենց աշխատակցությունը և համաձայնությունը կապիտալիստների և կալվածատերների հետ. Բոլոր համագումարներում, ուր չեն հրավիրվում հեղափոխական միությունների ներկայացուցիչները, ներկա յելինում և խոշոր դեր ե կատարում համաշխարհային կապիտալի գործակալության՝ Ազգերի Լիգայի Աշխատանքի Բլուրովի ներկայացուցիչը:

Գյուղատնտեսական Բանվորների Միջազգային Միության ղեկավարներն արդեն սովորություն

են արել չփորոշել և վոչ մի հարց առանց մի-  
ջազգային կապիտալիզմի ներկայացուցիչների  
մասնակցության:

Այդ պահառով միջազգային բանվորական  
շարժման բոլոր կարևոր հարցերը տրվում են  
Ազգերի խմբերի այստական լիգայի նույն Աշխա-  
տանքի Բյուրություն քննության:

Այսպես, որինակ, 1926 թ. Շվեյցարիայի  
ֆընկ քաղաքում տեղի ունեցած Գյուղատնտեսա-  
կան Բանվորների Միջազգային Միության համա-  
գումարն Ազգերի Լիգայի Աշխատանքի Բյուրոյի  
քննության հանձնեց գյուղատնտեսական բան-  
վորների այստանքի ժամերի տեսողության խըն-  
դիրը, կանանց և յերեխաների աշխատանքի հարցը  
և այլ հարցեր:

Գյուղատնտեսական Բանվորների Միջազգային  
Միությունը չի միացնում բոլոր յերկրների գյուղա-  
տնտեսական բանվորներին: Միջազգային Միության  
ղեկավարները դավաճանել են բանվոր դասակարգին  
յեվ դարձրել Միությունը կալվածատերերի յեվ կա-  
պիտակատների ծեռքին խաղալիք: Իհարկե, Մի-  
ջազգային Միությունն այդ պայմաններում չի  
կարող աճել, զարգանալ, այլ նաև վագում, քայ-  
քայվում եւ:

Իսկ յեթե մեզ հարցնելու լինեն՝ գյուղություն  
ունի գյուղատնտեսական բանվորների ինտեր-

նացիոնալ, մենք կպատասխանենք. «Թղթի վրա այդպիսի ինտերնացիոնալ գոյություն ունի, բայց գործի մեջ՝ միասնական, մարտական դասակարգային բարրակային ինտերնացիոնալ տակավին գոյություն չունի»:

## **Յ. ՊԱՅՉԱՐ ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՅԻԼՆԱԼԻ ՀԱՄԱՐ**

Մինչդեռ միասնական մարտական ինտերնացիոնալն առանձնապես անհրաժեշտ և գյուղատնտեսական յեզ անտառային տնտեսությունների բանվորների յերիտասարդ շարժման համար:

Տարբեր յերկրների փորձի, ինչպես և բոլոր յերկրների կազմակերպված բարրակների աջակցության վրա հենված միասնական միջազգային ղեկավարությունն ե, վոր կապահովի գյուղատնտեսական և անտառային բանվորների դասակարգային պայքարի հաջողությունը։ Այդ միջոցով ե, վոր Ամերիկալի, Ասիալի, Աֆրիկալի գյուղատնտեսական բանվորները կկարողանան որ առաջ հեղափոխականորեն կազմակերպվել և տանել միացյալ դասակարգային պայքար։

Այդ միջոցով կխափանվի կաղիտալիստների և կալվածատերերի կովի այն միջոցը, վոր նրանք գործադրում են գործադրուլների ժամանակ, այն ե՝ ուրիշ յերկրներից բանվորական ուժեր բերելը։ Բանվորների միջազգային միասնական,

մարտական կազմակերպվածությունն արդեն կլինի մի խոշոր արգելք կալվածատերերի առաջ։ Այդ միջոցով ե, վոր առաջ կզա գյուղատնտեսական բանվորների իսկական միջազգային բանվորական միություն։

Այդ պատճառով Կարմիր Պրոֆինտերնի համագումարին Մոսկվայում գյուղատեսական բանվորների լեռեք հեղափոխական միությունների՝ Խորհրդային Միության, Չեխո-Սլովակիայի և Բոլգարիայի պատգամավորները և յերկու լեռելը միությունների՝ Գերմանիայի և Շվեդիայի համաձայնողական արհմիությունների ներսի հեղափոխական փոքրամասնության ներկայացուցիչները դեռ 1921 թ. հուլիս 22—25 քննում են գյուղատընտեսական բանվորների ինտերնացիոնալի հարցը։

Այդ հարցի վորոշման համար լերկու հնարավորություն, լերկու միջոց ել լինում։ —

Առաջին՝ անմիջապես կազմակերպել գյուղատնտեսական բանվորների հեղափոխական ինտերնացիոնալ, իրքև հակակշիռ գոյություն ունեցող համաձայնողական Միության։

Յերկրորդ՝ լերկարատե, համառ և շխատանք տանել գյուղատնտեսական բանվորների տյն միություններում, ուր իշխում են համաձայնողականները, և զրավել այդ միջոցով գյուղատընտեսական բանվորների մասսաները զեպի հեղա-

փոխական դասակարգային պալքուր և այդ միջուցով նախապատր ստեղծ բատրակալին հեղափոխական ինտերնացիոնալ կազմակերպելու գործը:

Այդ կոնֆերենցիան չկամենալով ուժեղացնել արդեն գոյություն ունեցող Աստումը՝ վորշում և ընտրել յերկրորդ միջոցը:

Այդ կոնֆերենցիալին կազմվում ե գյուղատնտեսական բանվորների միջազգային պրոպագանդի կոմիտե։ Այդ մարմինն իրեն նպատակ ե դնում տանել գյուղատնտեսական բանվորների լայն մասսաների մեջ հեղափոխական դասակարգային պալքարի պրոպագանդ և այդ միջոցով նվաճել Միջազգային ֆեդերացիան՝ Միոթյունը։

Այդ ուղղությամբ սկսվում են և միջազգային պրոպագանդի կոմիտեյի աշխատանքները։ Նա իր աշխատանքները ծավալում ե մեկ կողմից հեղափոխական միություններում, մյուս կողմից համաձայնողական ղեկավարների ազդեցության տակ գտնվող միությունների հեղափոխական փոքրամասնությունների շրջաններում, ընդարձակելով իր պրոպագանդը հենց այդ միությունների բոլոր խավերում։ Միաժամանակ կոմիտեն սկսում ե հրատարակել լրագրեր, կոչեր, գրքույներ՝ նպատակով բատրակության դասակարգային դաստիարակության գործին։

Գյուղատնտեսական բանվորների համաձայնողական միությունների ղեկավարների գործունելության վրա միջազգային պրոպագանդի մարմինները հսկիչի գեր են կատարում. նրանց գործողություններն առնվում են հսկողության տակ: Համաձայնողական ղեկավարների ամեն մի նոր դավաճանությունը, վոր նրանք կատարում են կալվածատերերի հետ դաշնակցած, ձեղքածեռքի, միջազգային պրոպագանդի մարմիններն իսկույն թուոցիկների, կոչերի միջոցով տեղյակ են դարձնում կատարվող կամ կատարված դավաճանության մասին գյուղատնտեսական բանվորների լայն մասսաներին: Միևնույն ժամանակ միջազգային պրոպագանդի կոմիտեն և նրանց հարող միությունները և տարբեր յերկըրների փոքրամասնություններն, առաջադրում ելին այն խնդիրները, վորոնք յերեան ելին գալիս դեպքերի դասավորությամբ գյուղատնտեսական բանվորների շարժման մեջ:

Տալրեր յերկըրների հեղափոխական գյուղատնտեսական բանվորների կապի ամրացմանը քիչ չնպաստեց 1922 թ. Մոսկվայում, ղեկտեմբեր ամսին գումարված Գյուղատնտեսական և Անտառային Հեղափոխական Բանվորների յերկըրդ Միջազգային Կոնֆերենցիան:

Մի տարի հետո, 1923 թ. Մոսկվայում

կալացավ Գյուղատնտեսական և Անտառային Հեղափոխական Բանվորների յերրորդ Միջազգային կոնֆերենցիան։ Այդ կոնֆերենցիային ներկա լեն լինում գյուղատնտեսական բանվորների 6 հեղափոխական արհմիությունների (Զեխո-Սլովակիա, Ֆրանսիա, Ֆինլանդիա, Նորվեգիա, Եստոնիա և ԽՍՀՄ), ինչպես և չորս յերկրների՝ Գերմանիայի, Լեհաստանի, Լիտվայի և Եստոնիայի համաձայնողական միությունների հեղափոխական փոքր ամանության ներկայացուցիչները։ Ի նկատի ունենալով աշխատանքի փորձը, հատկապես Միջազգային Պրոպագանդի կոմիտեյի փորձը, կոնֆերենցիան մշակում ե գյուղատնտեսական բանվորների պահանջների և գործողության ծրագիրը։ Այդ ծրագրում ասված ե.

«Գյուղատնտեսական և Անտառային Բանվորների Միջազգային կոնֆերենցիան հաստատում ե.

ա) Կապիտալիստական բոլոր յերկրներում գյուղատնտեսական և անտառային բանվորների աշխատանքի պայմանները և աշխատավարձը զնալով ավելի վատթարանում են։

Համաշխարհային կապիտալիզմը չկարողանալով տանել տեսեսական փլուզումը (քայլքայումը) և այժմ պատմականորեն գրա-

նըվելով իր գոյության վերջին շրջանում, հնարավորություններ և վինտոում (մանգալիս) վորեե կերպ աղահպանել իր գոյությունը պրոլետարիատի աշխատանքի պայմանների վատթարացման և աշխատավորձի պակասեցման միջոցով։ Հենց այն համգամանքը, վոր զյ ւղատնական և անտառային բանվորներն ավելի թուլ են կազմակերպված, քան արդյունաբերական բանվորները, աշխատավարձի պակասեցումը, ինչպես և աշխատանքի պայմանների վատթարացումն այստեղ շատ ավելի աչքի լինենաւմ։

Բոլոր կապիտալիստական յերկրներում տեղի լե ունենում ուեալ աշխատավարձի հետեղական պակասեցում, նկատվում են առ ինչպես բնակարանային պայմանների վատթարացում, այնպես ել աշխատանքի ժամերի տեղության յերկարացում։

Պրոֆմիությունների ռեֆորմիստական ղեկավարները՝ բա՞վոր դասակարգին շարունակ անորինակ կերպով դավաճանել են. ցուց են տվել աջակցություն քայլալիվող կապիտալիստական տնտեսության, նպաստել նրան պայքարելու հեղափոխական ովրութարիատի հարձակումների դեմ։ Այդ պատ

ճառով գլուղատնտեսական բա ։ վորների տընտեսական ծանր դրության պատասխաննատվության խոշոր մասն ընկնում ե ռեֆորմիստ առաջնորդների վրա։

բ) Խորհրդավին Միության մեջ հա՛տուակ կապիտալիստական յերկրների, հետը հետե նկատվում ե գլուղատնտեսական և անտառային բանվորների տնտեսական դրության բարելավում մեր յերկրի տնտեսական ընդհանուր վերելքի չափով, վորը ղեկավարում ե բանվորա գլուղացիական կառավարությունը։

«Պրոլետարիատը չի կարող սպասել իր տնտեսական դրության հաստատուն բարելավում, նույնիսկ չի կարող արգելել իր տնտեսական դրության աստիճանական վատթարացումը, յեթե նա չզրավի քաղաքական իշխանությունը և չզերացնի կապիտալիստական կարգերը։ Դրա համար անհրաժեշտ է բոլոր շահագործվողների և ճնշվածների միասնական ճակատը և հատկապես գլուղատնտեսական բանվորների միասնական ֆրոնտը։

Այսուհետեւ ծրագիրը վորոշում ե գլուղատնտեսական բանվորների դասակարգային պայքարի յեղանակները և թվում ե այն պահանջ-

ները, վորոնց համար գյուղատնտեսական և անտառային բանվորների լայն մասսաները պետք է համառ պալքար սղեն իրենց տերերի դեմ՝ կոնֆերենցիան ընդունում ե և մի շարք այլ կարեվոր վորոշումներ, ինչպես, որինակ՝ կոփվ ֆաշիզմի դեմ, աշխատավարձի, տնտեսական պալքարի, բատրակային աշխատանքալին որենսդրության, կազմակերպչական և այլ հարցերի մասին։ Մասնավորապես կոնֆերենցիան արտահայտվում է բատրակների և մանր գյուղացիության դաշինքի մասին, կալվածատերերի և կապիտալիստների դեմ ուղղված պալքարում փոխադարձ աջակցություն ցուց տալու մասին։

Այսպիսի պարզությամբ և ամբողջականությամբ գյուղատնտեսական և անտառային բանվորների դասակարգալին պալքարի խնդիրները համաձայնողական միջազգային միությունը վոչ մի անգամ չի դրել։ Այդ պատճառով գյուղատնտեսական և անտառային տնտեսության բանվորների միջազգային յերրորդ կոնֆերենցիալի աշխատանքները բատրակալին միջազգային շարժման համար խոշոր նշանակություն ունեն։

Բացառիկ կարեռը են գյուղատնտեսական բանվորների շարժման համար այն վորոշումները, վոր տվել եր Կարմիր Պրոֆինտերնի յերրորդ համագումարը։ Այդ վորոշումներով մանրամասն

դբաղվում և կոնֆերենցիան։ Պրոֆինտերնի լեռ-  
ըորդ Համագումարը լսում է գյուղատնտեսական  
և անտառային բանվորների Միջազգալին Պրոպա-  
գանդի կոմիտելի քարտուղար ընկ. Ն. Անցե-  
լովիչի զեկուցումը բատրակների պրոֆաշխա-  
տանքի և գյուղացիական կազմակերպություն-  
ների հետ ունեցած հարաբերությունների մասին։  
Այդ զեկուցման առթիվ ընդունվում է ընդարձակ  
բանաձև, վորում ասված և.

«Պրոֆինտերնի լեռըորդ համադումարը  
հաստատելով իր վորոշումները, վորը նա  
ընդունել է իր նախորդ համագումարներում  
գյուղատնտեսական բանվորների մեջ աշխա-  
տանքներն ամեն կերպ ուժեղացնելու բա-  
ցառիկ կարևորության մասին, համարում է,  
վեր բոլոր կարմիր պրոֆմիությունների խըն-  
դիրը, հատկապես ներկայումս, այս ե, վոր  
ոգնություն ցույց տրվի գյուղատնտեսական  
և անտառային բանվորների բազմամիլիոն  
մասսաներին, վորոնք աշխատում են խոշոր  
կալվածատերերի մատ, գյուղերում ունեոր-  
ների մոտ և այլ տնտեսություններում,  
վոր իրենց գիտակցեն վորպես դասակարգ.  
ցույց տրվի պրոլետարիատի այդ հետա-  
մնաց խավին կազմակերպչական և նյութա-  
կան աջակցություն, վորպեսզի դուրս կոր-

զելով նը ան համաձայնողականների ազգեցության շրջանակից, հաղթահարելով նրանց ցրվածությունը՝ կազմել գլուղատն տեսական և անտառալին բանվոր՝ երի ուժեղ միություն։

Պրոֆինտերնի համագումարի նույն բանաձևում մանրա և ամսն նշված են այդ աջակցության բոլոր կոնկրետ ձևերը։ Այնտեղ ասված ե, որ պիտի ոգնել և ուժերով, և նյութական միջոցներով, և պաշտպանելով նրանց դասակարգային կորիվը։

Նշելով գլուղատն տեսական բանվորների կազմակերպության հսկայական նշանակությունը բանվորների և գյուղացիների դաշինքի ամրացման գործում՝ համագումարը միաժամանակ ընդգծում ե, վոր նա «նպատակահարմար չի գտնում կազմելու խառն կազմակերպություն աշխատավոր գյուղացիության հետ և ընդգծում ե զբողատն տեսական և անտառալին բանվորների ինքնուրույն դասակարգային միությունների գոյության կարևորությունը»։

Գյուղատն տեսական բանվորների հեղափոխական պրոֆմիութենական շարժման զարգացումը վերջին տարիների ընթացքում գնացել ե Պրոֆինտերնի Միջազգային Կոնֆերենցիայի նշածուղիներով։ Խնչպես և առաջ, պրոգագանդի միջազգային կոմիտեն իրեն մոտիկ նպատակ ե

դնում հասնել գյուղատնտեսական բանվորների շարժման միասնականության ինչպես առանձին յերկրներում, այնպես ել ամբողջ աշխարհում։

Այժմ Միջազգային Պրոպագանդի Կոմիտեյին հարում են տասներկու յերկրներում ութ հեղափոխական պրոֆմիություններ և չորս հեղափոխական փոքրամասնություն։ Միջազգային Պրոպագանդի Կոմիտեյի ազգեցությունն ամբողջ աշխարհի գյուղատնտեսական բանվորների լայն մասսաների մեջ աճում է։ Միասնական մարտական բատրակային ինտերնացիոնալ կազմելու աշխատանքը շարժվում է առաջ։

## 7. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԲԱՏՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ

Դյուղատնտեսական և անտառային տնտեսությունների բանվորության միջազգային պրոֆմիութենական շարժման մեջ և մասնավորապես Միջազգային Պրոպագանդի Կոմիտեյի գործունեյության մեջ ԽՍՀՄ գյուղատնտեսական յեվ անտառային բանվորների պրոֆմիությունը հանդիսանում է շատ ազդեցիկ կազմակերպություն։ Այդ և հասկանալի լեզ զերծ չկա մի յերկիր, ուր գյուղատնտեսական և անտառային բանվորների միությունն ունենար պայքարի այնպիսի հարուստ փորձ, վորպիսին

ունի ԽՍՀՄ գյուղատնտեսական բանվորների  
միությունը:

Միջազգային Պրոպագանդի Կոմիտեյի  
քարտուղարությունը գտնվում է Մոսկվայում:  
Այդ քարտուղարությունը ղեկավարում է բոլոր  
այն աշխատանքները, վոր տեղի յեն ունենում  
կոնֆերենցիաների և Միջազգային Պրոպագան-  
դի Բյուրոյի խորհրդակցության դադարի ժա-  
մանակ:

ԽՍՀՄ Գյուղատնտեսական Բանվորների  
Միությունը, բացի Միջազգային Պրոպագանդի  
Կոմիտեյի մեջ ունեցած իր այդ մասնակցությու-  
նից, պահպանում է արտասահմանյան բատ-  
րակային յեղբայրական կազմակերպություն-  
ների հետ անմիջական հարաբերություն: Քիչ  
չեն այն դեպքերը, յերբ համաձայնողական ազ-  
դեցություններից ազատագրված գյուղատնտեսա-  
կան բանվորների միությունները կապ են հաստա-  
տում ԽՍՀՄ գյուղատնտեսական բանվորների  
միությունների հետ: Քիչ չեն նպաստում մեր  
միությունների ազդեցության աճման և այն  
միջազգային պրոետարական համերաշխության  
փայլուն որինակները, վորոնք ցուց են տալիս  
սովետական բատրակները և նրանց պրոֆմիու-  
թյունները արտաքսահմանյան բատրակային պրոֆ-  
շարժման: Այսպես, որինակ, անդիտական գյուղա-

տնտեսական բանվորները, վոչ թե խոսքով այլ գործով համոզվեցին, վոր Խորհրդավին Միության բատրակությունը պատրաստ և աջակցելու արտասահմանական բանվորությանն իրենց պայքարում՝ ուղղված կապիտալի դեմ։ Նրանք համոզվեցին, վոր համաձայնողական դեկավարները հանդիսանում են կապիտալիստների ամենահավատարիմ գինակիցները։ Մեր բատրակային հատկացումները հոգուտ անզիական գործադուլավորների գեղեցիկ կերպով ապացուցեցին, թե ովքեր են նրանց իսկական բարեկամները։

Այդպիսի նշանակություն ունեցավ իտալական բատրակների համար ԽՍՀՄ բատրակների ցույց տված ոգնությունը Իտալիայի Մոլինելի շրջանի գյուղատնտեսական բանվորներին իրենց պայքարի ընթացքում՝ ուղղված ֆաշիստների դեմ։

Արտասահմանյան բանվորները լարված ուշադրությամբ հետեւուժ են աշխարհի միակ պրոլետարական պետության կյանքին, մեր Խորհրդավին Սոցիալիստական Հանրապետությունների Միության սոցիալիստական շինարարության ինարկե, արտասահմանական գյուղատնտեսական և անտառալին բանվորներին հատկապես հետաքրքրում եւ և իրենց դասակարգակից խորհրդա-

յին ընկերների պրոֆշինարարական շարժումը:

Մենչեփէան դեկավարներն ամեն կերպ ջանում են անվանարկել և զրպարտել և Խորհրդային Միությունը, և խորհրդային պրոֆշարժումը: Բայց «մախաթը մեշոկում չես կարող թագցնել», —ինչպես ժողովուրդն ե ասում: Արտասահմանից մեր յերկիրը յեկող բազմաթիվ բանվորական պատգամավորությունները վերադառնալով իրենց յերկրները՝ մերկացնում են այդ զրպարտությունները: Յեվ նույնիսկ համաձայնողական առաջնորդներն իրենք հետզհետե, ակամայից, իրենց կամքին հակառակ, ճանաչում են Խորհրդային Միության կուլտուրական և տնտեսական վերելքը: Իզուր չե, վոր Վենգրիալի համաձայնողական արհմիության լրագիրը հոդված եր զետեղել, ուր նա ճանաչում ե մեր միության բոլոր նվաճումները:

Խորհրդային բատրակության որինակը ցուց ե աալիս ամբողջ աշխարհի գյուղատնտեսական և անտառային բանվորներին, վոր միմիայն գնալով ընկ. Լենինի կողմից նշված բայցեփիկյան ճանապարհով կարելի յե համնել լավա-

դույն կյանքին Թող Խորհրդավին Միության մեջ  
ամեն մի բատրակ, հոտաղ, անտառային բանվոր,  
խորհրդային տնտեսության բանվոր հիշի, վոր  
կառուցելով և ամրացնելով իր արհմիությունը,  
նա դրանով ամրացնում է ապագա բատրակային  
ինտերնացիոնալի ողակներից մեկը:


---


## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Եզ

1.	Ինչու բատրակներն արտասահանում կազմակերպված են ավելի վատ, քան կալվածատերերը . . . . .	3
2.	Կապիտալի հարձակումը գյուղատնտեսական և անտառալին բանվորների վրա . . . . .	13
3.	Ինչպես համաձայնողական առաջնորդները դավաճանում են բատրակության շահերին . . . . .	23
4.	Բատրակությունը և կոմմունիստական կուսակցությունները . . . . .	30
5.	Միասնական բատրակալին մարտական ինտերնացիոնալ գեռես գոյություն չունի . . . . .	36
6.	Պայքար գյուղատնտեսական բանվորների մարտական ինտերնացիոնալի համար . . . . .	46
7.	Խորհրդակին բատրակության մասնակցությունը միջազգային շարժման մեջ . . . . .	56









ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038938

1143

A I 4178

На пути к батрацкому  
интернационалу



ԳԻՒՆ Ե 12 ԿՈՊ.